ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Աշխատուժի ինտենսիվ վերարտադրության ժամանակակից խնդիրները, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1987, 151 էջ։

Հասարակական վերարտադրության ամբողջ համակարգի բաղկացուցիչ մասերից մեկը՝ աշխատուժի ինտենսիվ վերարտադրությունը, ներկայումս ժողովրդատնտեսական առավել կարևոր նշանակություն է ձեռք բերել, քանի որ լրացուցիչ աշխատուժ ընգգրկելու հաշվին էկոնոմիկայի աճի հնարավորությունները խիստ սահմանափակվել են։ Սովետական տնտեսագիտական գրականության մեջ աշխատուժի վերարտադրության պրոբլեմին նվիրված են մի շարք աշխատություններ։ Սակայն երկրի էկոնոմիկայի վերակառուցման արդի փուլում աշխատուժի ինտենսիվ վերարտադրության մի շարք պրոբլեմներ, մասնավորապես նաև գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում մեր հանրապետության աշխատուժի ինտենսիվ վերարտադրության խնդիրները դեռ բավարար լուծում չեն ստացել։ Այս առումով գրախոսվող աշխատությունը միանգամայն հրատապ է և տեսական որոշակի հետաքրքրություն ներկայացնելուց բացի ունի գործնական կարևոր նշանակություն։

Ելնելով ՍՄԿԿ XXVII համագումարի նախանշած մարդկային գործոնի ակտիվացման և հասարակական ինտենսիվ վերարտադրության պրոցեսում նրա դերի բարձրացման դրությից, հեղինակը պարզաբանել է սոցիալիստական արտադրության ինտենսիվացման ներկա և հեռանկարային առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը հասարակության հավաքական աշխատուժի վերարտադրության վրա, ինչպես նաև արտադրության ինտենսիվացման հետևանքով աշխատուժի վերարտադրության ծախսերում կատարվող փոփոխությունները։

Աշխատուժի շարժումը ներկայացնելով սովետական տնտեսագիտության մեջ արդեն լայն ճանաչում գտած վերարտադրության եռափուլ տեսության հայեցակետից, հեղինակը ցույց է տալիս, որ այն գործնականում պահանջում է որոշակի ապահովվածություն կենսամիջոցներով, այսինքն՝ հասարակականորեն անհրաժեշտ ծախսերով։

Հիմք ընդունելով արտադրության մեջ աշխատուժի սպառման աստիճանը, նրա բնական կորուստը, որակյալ աշխատուժի պահանջը, աշխատուժի բարոյական մաշումը և անհատի համակողմանի զարգացումը, հեղինակը տալիս է հասարակության հավաքական աշխատուժի վերարտադրության ծախսերի դասակարգումը (էջ 20—21)։

Դրվատելի է, որ աշխատուժի վերարտադրության ծախսերի ձևավորումը, դրանց փոխհատուցումն ու կառուցվածքը ներկայացվում են ոչ միայն որպես արտադրության հետևանք, այլև խստորեն կապվում են սոցիալիստական արտադրական հարաբերությունների, դրանց վերարտադրության առանձնահատկությունների և գործող տնտեսական մեխանիզմի հետ։ Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև արտադրական հարաբերությունների ինտենսիվ վերարտադրությանը նվիրված վերլուծությունը (էջ 21—25)։

Քննելով բաշխման հարաբերությունների ինտենսիվ վերարտադրության խնդիրները և դրանց դերը աշխատուժի ծախսերի փոխհատուցման գործում, նշվում է, որ «սոցիալիզմի ժամանակ ըստ աշխատանքի բաշխման սկզբունքը աշխատուժի ծախսերի փոխհատուցման տնտեսական օրենքի պահանջը կենսագործելու ձևերից մեկն է, որն աշխատուժի ծախսման քանակական ու որակական փոփոխությունների հիման վրա անընդհատ կատարելագործվում է» (էջ 29)։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխատուժի ծախսերի փոխհատուցման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա ազդող երկու հակադիր գործոնների՝ դրամական եկամուտների ավելացման և ժողովրդական սպառման ապրանքների գների իջեցման վերլուծությունը։ Բազմակողմանի մոտեցում ցուցաբերելով պրոբլեմի լուծմանը, մասնավորապես քննելով վերջին տասնամյակներում դրսևորվող միտումները, Գ. Կիրակոսյանը նպատակահարմար է համարում աշխատուժի վերարտադրության ծախսերը փոխհատուցելու և բնակչության պահանջմունքները բավարարելու պրակտիկայում առաջնությունը տալ ժողովրդական սպառման ապրանքների գների ու սպասարկումների և ծառայությունների տարիֆների իջեցմանը։ Հեղինակը գտնում է, որ նախ, դա ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության անշեղ աճի տնտեսական օրենքի պահանջն է, և ապա, ժողովրդական սպառման ապրանքների գների և սպասարկումների ու ծառայությունների տա-

ռիֆների իջեցումն ավելի ուժեղ է դարձնում բնակչության պահանջմունքների բավարարումը։ Մինչդեռ, դրամական եկամուտների անընդհատ ավելացումը կարող է ուղեկցվել գների և տարիֆների բարձրացումով, որը հակասում է աշխատանքի արտադրողականության անշեղ աճի տնտեսական օրենքի պահանջներին և ոչ թե բարձրացնում, այլ իջեցնում է բնակչության կենսամակարդակը (էջ 33—34)։ Սակայն դա չի նշանակում, որ բացառվում է բնակչության դրամական եկամուտների ավելացումը որպես օրինաչափ պրոցես. ընդհակառակը, այն հեղինակի կողմից դիտվում է աշխատանքի և աշխատուժի ծախսերի բովանդակության փոփոխության հիման վրա և անձնական շահագրգռվածության սկզբունքի հետ կապի մեջ։ Միաժամանակ իրավացիորեն նշվում է, որ հիշատակված երկու գործոնների ազդեցության ընդհանուր արդյունքը՝ կենսամիջոցների ֆոնդի աճի տեմպերը, չպետք է գերազանցեն հասարակական աշխատանքի արտադրողականության աճի տեմպերին։

Քննարկելով անհրաժեշտ արդյունքի ֆունկցիոնալ գերն աշխատուժի վերարտադրության պրոցեսում, հեղինակը զտնում է, որ անհրաժեշտ արդյունքը կոչված է վերարտադրելու ոչ միայն արտադրության տվյալ փուլում ծախսված ֆիզիկական ու մտավոր ընդունակությունները, այլև նյութական հիմք լինել արտադրության հաջորդ փուլի ավելի բարձրորակ աշխատուժի ձևավորմանը, որի անբաժանելի մասը մարդու ազատ ու համակողմանի զարգացումն է (էջ 40—41)։ Մեթոդաբանորեն ճիշտ այս մոտեցումը ժխտում է որոշ հեղինակների առաջ քաշած այն դրույթը, թե իբր անհատի բազմակողմանի զարգացումն ապահովվում է ոչ միայն անհրաժեշտ, այլև հավելյալ արդյունքի միջոցով։ Հետաքրքրական է նաև անհրաժեշտ արդյունքի ստորին և վերին սահմանների վերլուծությունը, ինչպես նաև անվանական աշխատավարձից դանձվող հարկերը և կատարվող մուծումներն անհրաժեշտ արդյունքի մեջ մտցնելու հեղինակի առաջարկը։ Սակայն վիճելի է հոգևոր բարիքների արտադրության ոլորտի աշխատուժի վերարտադրությունն անհրաժեշտ արդյունքին վերագրելը։ Իհարկե, հոգևոր բարիքներ արտադրողների աշխատանքի արդյունքն անմիջական մասնակցություն է ունենում աշխատուժի վերարտադրության պրոցեսին և պարունակում է անհրաժեշտ արդյունքի տարրեր, սակայն ամբողջովին այն անհրաժեշտ արդյունք համարելը թերևս ճիշտ չէ։

Շահեկան է աշխատավարձի տարբերակման ժամանակակից խնդիրների վերլուծությունը։ Ուշագրավ է այն միտքը, որ աշխատավարձը չպետք է դիտել միայն որպես անհրաժեշտ արդյունքի դրամական արտահայտություն, այլ պետք է խնդրին մոտենալ այն տեսակետից, թե կենսամիջոցների վերածվելու ընթացքում աշխատավարձն ի՞նչ չափով է պահպանում աշխատուժի ծախսերի փոխհատուցման և վերարտադրության իր ֆունկցիան։ Առաջարկվում է աշխատավարձի տարբերակման համար «նախ՝ որոշել արտադրության մեջ ծախսված աշխատուժի վերականգնման անհրաժեշտ կենսամիջոցների բնաիրային քանակը օրվա, ամսվա և տարվա համար, և ապա՝ ելնելով սպառման առարկաների գներից և սպառման ռացիոնալ նորմաներից, որոշել աշխատավարձի չափը, նման դեպքում աշխատավարձի սահմանումն ու տարբերակումը կունենա իրական հիմք՝ արտադրության մեջ սպառված աշխատուժը» (էջ 56)։

Կոնկրետ գործնական նշանակություն ունի ՍՍՀՄ-ում միջին մեծության ընտանիքի և նրա մեկ անդամի աշխատուժի վերարտադրության ծախսերի հաշվարկը բացարձակ արտահայտությամբ և դրա համեմատումն ընտանիքի դրամական եկամուտների, միջին աշխատավարձի և վերջինիս նվազագույն մեծության հետ (էջ 60—61)։ Հաշվարկից երևում է, որ ընտանիքի ընդհանուր դրամական եկամուտները դեռևս պակաս են թե՛ ընտանիքի պահպանման ընդհանուր և թե մեկ շնչի պահպանման ծախսերից։

Վիճակագրական հարուստ նյութերի վերլուծության, ինչպես նաև ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ ժողովրդագրական մի շարք առանձնահատկությունների բացահայտման շնորհիվ աշխատության մեջ ցույց է տրվում սպառման հասարակական ֆոնդերի դերը որպես աշխատուժի ինտենսիվ վերարտադրության աղբյուր։ Մասնավորապես աշխատուժի ինտենսիվ վերարտադրության նշանակությունը մեծանում է այն բանով, որ աշխատուժի քանակական ավելացումն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ մեր հանրապետությունում սահմանափակված է բնակչության բնական աճով, որը նվազելու բացահայտ միտում ունի։ Աշխատության մեջ փաստացի նյութերի վերլուծության շնորհիվ ցույց է տրվում որակյալ աշխատուժի վերարտադրության առանձնահատկությունները։ Գործնական կարևոր նշանակություն կարող է ունենալ հեղինակի այն առաջարկությունը, որ կենսաթոշակի մեծությունը պետք է սահմանել ոչ թե վերջին մի քանի տարվա աշխատավարձի, այլ այն տարիների աշխատավարձի միջինից ելնելով, երբ հասարակության անդամը ստացել է համապատասխան որակավորում և սկսել աշխատանքային գործունեությունը։ Ուշագրավ է նաև այն առաջարկությունը, որ պահանջմունքների փո-

փոխությունից ելնելով յուրաքանչյուր հինգ տարին մեկ պետք է վերանայել կենսաթոշակները և բարձրացնել դրանք։

Աշխատուժի ինտենսիվ վերարտադրության պրոցեսում անձնական օժանդակ տնտեսություններից ստացված եկամուտների դերը և նշանակությունը քննելու հետ մեկտեղ հեղինակը բացահայտում է ուրբանիզացման ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունը, մասնավորապես գյուղատնտեսական մթերքների արտադրության և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա։ Առաջարկվում է գյուղատնտեսական աշխատուժի կայունացումը և արդյունավետ վերարտադրությունն ապահովելու, ինչպես նաև ՍՍՀՄ պարենային ծրագիրը կենսագործելու համար առաջիկայում անտեսական ու սոցիալական կտրուկ միջոցառումներով սահմանափակել քնակչության ուրբանիզացման երեույթը։ Մեր կարծիքով աշխատությունը կշահեր, եթե հեղինակը վերլուծության ենթարկեր նաև անհատական աշխատանքային գործունեության և կոոպերատիվների ծավալման հետևանքով աշխատուժի ինտենսիվ վերարտադրության սպասվելիք փոփոխությունները։

Մենագրության եզրափակիչ գլխում ուսումնասիրվում են աշխատուժի վերարտադրության ծախսերի փոխհատուցման տնտեսական մեխանիզմի կատարելագործման խնդիրները։ Ուշագրավ է հեղինակի այն դրույթը, որով նա ինտենսիվ վերարտադրության բնորոշ առանձնահատկությունն է համարում այն, որ գիտատեխնիկական առաջադիմության հետևանքով նոր ստեղծվող արդյունքի մեջ ավելանում է առարկայացած և պակասում կենդանի աշխատանքի բաժինը, իսկ կենդանի աշխատանքի կազմում պակասում է ֆիզիկականը և ավելանում մտավորը։ Ընդ որում, «կենդանի աշխատանքի համեմատությամբ առարկայականի ավելացումը կատարվում է ավելի բարձր տեմպերով, քան կենդանի աշխատանքի կազմում մտավորն ավելանում է ֆիզիկականի համեմատությամբ, հակառակ դեպքում հասարակական աշխատանքի արտադրողականությունը չէր բարձրանա» (էջ 95)։ Սրանից հետևում է, որ ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա աշխատուժի վերարտադրությունը գերազանցապես տեղի է ունենում ինտենսիվ ճանապարհով, որի հետևանքով էլ աշխատուժի վերարտադրության ծախսերը դրսևորում են ավելանալու միտում։ Տեսական դրույթից բխող այս եզրահանգումը հեղինակը հաստատում է նաև բերված թվային կոնկրետ և փաստացի օրինակներով, որից երևում է, որ աշխատուժի վերարտադրության ինտենսիվացումն ուղեկցվում է ինչպես հասարակական, այնպես էլ անհատական աշխատուժի վերարտադրության ծախսերի ավելացումով (էջ 101)։

Հայկական ՍՍՀ տարբեր շրջանների արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների օրինակով գրքում բացահայտվում են բնակչության սոցիալական խմբերի աշխատուժի վերարտադրության տարբերությունները։ Ցույց է տրվում, որ արդյունաբերության համեմատությամբ գյուղատնտեսական ձեռնարկություններում և կոլտնտեսություններում աշխատողների աշխատուժի վերարտադրության ծախսերի փոխհատուցումը տարբերվում է ոչ միայն իր բացարձակ մեծությամբ, այլև կառուցվածքով։ Արդյունաբերության համեմատությամբ կոլտնտեսություններում աշխատուժի վերարտադրության ծախսերի փոխհատուցման տարբերությունների գլխավոր պատճառը հեղինակը բացատրում է գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման ցածր աստիճանով։ Հիշյալ տարբերությունների վերացման ուղի է դիտվում գյուղատնտեսական արտադրության աստիճանական անցումն արդյունաբերական հիմքի վրա, որի լավագույն օրինակներն են միջտնտեսային ձեռնարկությունները և ագրոարդյունաբերական համալիրները։ Ընդունելով, որ սոցիալիստական հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման շահերը և արտադրության նպատակը պահանջում են աստիճանաբար վերացնել բնակչության սոցիալական խմբերի նյութական ապահովվածության տարբերությունները, անհրաժեշտ է համարվում լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել սպառման հասարակական ֆոնդերից գյուղական բնակչությանը հատկացվող մասի ավելացման ուղղությամբ։

Հենվելով հետազոտության դիալեկտիկական մեթոդի վրա, հեղինակն արտաքին ձևերից անցում է կատարում ներքին բովանդակության բացահայտմանը։ Այս առումով աշխատավարձն ու սպառման հասարակական ֆոնդերը դիտվում են որպես անհրաժեշտ արդյունքի ձևեր, իսկ հասարակական վերարտադրության համակարգում դրանց ֆունկցիոնալ նշանակությունը՝ աշխատուժի ծախսերի փոխհատուցում, որը հաճախ լրացվում է նաև անձնական օժանդակ տնտեսություններից ստացվող եկամուտներով։ Այստեղից արվում է այն հետևությունը, որ «աշխատուժի վերարտադրության ծախսերի փոխհատուցման գործող մեխանիզմը պետք է կատարելագործվի տնտեսական երևույթների ճանաչման այդ հաջորդականությամբ, որն աշխատուժի

ծախսերի փոխհատուցման տնտեսական օրենքի օբյեկտիվ պահանջն է» (էջ 119)։ Այնուհետև բացահայտելով աշխատուժի ծախսերի փոխհատուցման տնտեսական օրենքի բովանդակությունը, հեղինակը ցույց է տալիս, որ այդ օրենքի գործողությունը չի սահմանափակվում միայն արտադրության փուլով։ Ցուցաբերելով մեթոդաբանական ճիշտ մոտեցում, ներկայացվում է աշխատուժի ծախսերի փոխհատուցման օրենքի պահանջները վերարտադրության մյուս՝ բաշխման, փոխանակության և սպառման փուլերի նկատմամբ։ Այսքանից հետո սպասվում էր, որ հեղինակը կտա աշխատուժի ծախսերի փոխհատուցման տնտեսական օրենքի հստակ սահմանումը, սակայն դրան մենք չենք հանդիպում, մինչդեռ դա ևս կարևոր էր և մենագրությունն ավելի կշահեր, մանավանդ որ այդ օրենքը սովետական տնտեսագիտական գրականության մեջ դեռես համընդհանուր ճանաչում չի ստացել, իսկ դրա կողմնակիցներից շատերն այն տարբեր ձևով են սահմանում ու մեկնաբանում։

Աշխատության վերջում տրվում է սոցիալիստական տնտեսավարության կատարելագործման և աշխատուժի վերարտադրության խնդիրների միջև եղած կապը։ Հեղինակն անդրադարձել է նաև աշխատուժի վերարտադրության նյութական ապահովվածության ամբողջական տնտեսական մեխանիզմի մշակման հարցին, ցույց տվել դրա կազմավորման հիմնական սկզբունքները և արտադրողական ուժերի զարգացմանը համընթաց՝ կատարելագործման անհրաժեշտությունը, որպես կենսամիջոցների բաշխման սոցիալիստական հարաբերությունների ինտենսիվ վերարտադրության անհրաժեշտ պայմանների։ Սակայն պետք է նշել, որ վերջին տարվա ընթացքում ընդունվել են մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք օբյեկտիվ պատճառներով չէին կարող հեղինակի ուսումնասիրության նյութ ծառայել։ Մենագրության մեջ սպրդել են նաև մի շարք խմբագրական և տպագրական վրիպակներ (էջ 27, 33, 49, 64 և այլն), որոնք որակ չեն կազմում։ Գրախոսվող մենագրությունը գիտատեսական որոշակի հետաքրքրությունից բացի, ունի գործնական նշանակություն և կարող է օգտակար լինել ոչ միայն քաղաքատնտեսության պրոբլեմներով զբաղվող մասնագետների, այլև ընթերցողների լայն շրջանների համար։

Ս. Ն. ՍԻՄՈՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու